ՀՍՍՀ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՃԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՊԱՌՈՒՄԸ

Ռ. Խ. ՁՈՐԱՆՅԱՆ

Սոցիալիզմի ժամանակ հասարակական արտադրության գլխավոր նպատակը մարդկանց նյութական և կուլտուրական պահանջմունքների առավել լրիվ բավարարումն է։ Վ. Ի. Լենինը, անդրադառնալով սոցիալիստական հասարակարգում հասարակական արտադրության զարգացման հիմնական նպատակին, գրել է. «Միայն սոցիալիզմը հնարավորություն կտա պրոդուկտների հասարակական արտադրությունն ու բաշխումը լայնորեն տարածել և գիտական նկատառումներով իսկապես ենթարկել այն նպատակին, թե ինչպես բոլոր աշխատավորների կյանքը դարձնել առավել հեշտ, և այնպես, որ նա բարեկեցության հնարավորություն ընձեռի աշխատավորներին»[1]։

Սոցիալիստական արտադրության բնույթը կոնկրետ արտահայտություն է գտնում արտադրության և բնակչության պահանջմունքների ամբողջ համակարգի փոխադարձ կապի և պայմանավորվածության մեջ։ Հասարակության զարգացմանը զուգընթաց տեղի է ունենում բնակչության անձնական պահանջմունքների աճ։ Այդ պրոցեսը Վ. Ի. Լենինը բնորոշել է որպես «պահանջմունքների առաջընթաց աճման օրենք», որը պահանջում է արտադրության համապատասխան ճկունության մշտական ապահովում։ ՍՄԿԿ ծրագրում նշված է. «Ժողովրդական սպառման ապրանքների արտադրությունը պետք է լիովին բավարարի այդ ապրանքների նկատմամբ աճող պահանջարկը և համապատասխանի դրա փոփոխություններին։ Սպառման առարկաներ արտադրող ճյուղերի համար պարտադիր պահանջ է ժամանակին թողարկել բնակչության բազմազան պահանջներին համապատասխան ապրանքներ, հաշվի առնելով տեղական, ազգային և կլիմայական պայմանները»[2]։

Ժողովրդական բարեկեցությունը կամ բնակչության կենսամակարդակը արտադրողական ուժերի զարգացման տվյալ փուլում որոշվում է նյութական, կուլտուր-կենցաղային ու սոցիալական բարիքների սպառման չափով և դրանց նկատմամբ պահանջմունքների բավարարման աստիճանով։ Բնակչության կենսամակարդակը բնութագրվում է ցուցանիշների համակարգով, որը մի կողմից արտացոլում է բնակչության եկամուտներն ու նյութական բարիքների սպառումը, մյուս կողմից՝ սոցիալ-կուլտուրական ծառայություններից օգտվելու աստիճանը։ Այդ համակարգում հիմնական տեղը պատկանում է բնակչության ռեալ եկամուտներին[3]։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 511։

2 «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», Երևան, 1962, էջ 515։

3 Կարևոր դեր են կատարում նաև այնպիսի ցուցանիշները, ինչպիսիք են բանվոր-ծառայողների աշխատավարձը, կոլտնտեսականների եկամուտները, հանրային սպառման ֆոնդերից կատարվող անվճար ծառայություններն ու դրամական վճարումները, անձնական-օժանդակ տնտեսություններից ստացվող եկամուտները, մանրածախ ապրանքաշրջանառության ծավալն ու կառուցվածքը և այլն։

Սոցիալիստական հասարակարգում անձնական սպառման առարկաների ճնշող մասը բնակչությանն է անցնում ապրանքաշրջանառության և առևտրի ոլորտի միջոցով։ Այդ պատճառով բնակչության սպառման աճի և կառուցվածքի փոփոխությունների, հետևաբար և կենսամակարդակի բարձրացման կարևոր ցուցանիշներից մեկն է մանրածախ ապրանքաշրջանառության աճը, նրա կառուցվածքի փոփոխությունը։ Այդ ցուցանիշը սոցիալիստական շինարարության առանձին փուլերում արտահայտվել է տարբեր ձևերով։ Սովետական իշխանության առաջին տարիներին գյուղատնտեսական արտադրության ընդլայնման գործում բնակչությանը նյութապես շահագրգռելու համար նրան տրվեց առևտրի որոշակի ազատություն։ Դա միաժամանակ քաղաքի և գյուղի միջև ապրանքաշրջանառության զարգացման, բանվոր դասակարգի ու գյուղացիության հեղափոխական դաշինքի ամրապնդման և այդ հիմքի վրա երկրի տնտեսությունը վերականգնելու ու զարգացնելու միջոցներից մեկն էր։ Եթե 1923—1924 թթ. հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության մեջ պետական առևտրի տեսակարար կշիռը կազմում էր 7,7, կոոպերատիվինը՝ 30,8, իսկ մասնավոր առևտրինը՝ 61,5%, ապա 1925—1926 թթ. մասնավոր առևտրի տեսակարար կշիռը իջավ 39,3%-ի, իսկ պետական և կոոպերատիվ առևտրինը բարձրացավ և կազմեց 60,7%[4]։

Մեր հանրապետությունում ընդլայնվեց պետական ու կոոպերատիվ առևտրի ապրանքաշրջանառությունը և դրան համապատասխան նվազեց մասնավոր ապրանքաշրջանառության ծավալը։ 1929 թ. պետական և կոոպերատիվ առևտրի տեսակարար կշիռը կազմում էր 73,4, իսկ մասնավոր առևտրինը՝ 26,6%[5]։ Միաժամանակ ընդարձակվեց հանրապետության առևտրի մանրածախ ցանցը։ 1932 թ. Հայաստանում կազմակերպվում են բանվորական մատակարարման բաժիններ, որոնց իրավունք էր վերապահվում կատարելու գյուղատնտեսական մթերքների ապակենտրոնացված գնումներ, կազմակերպելու օժանդակ տնտեսություններ։ Դրանց թիվը 1934 թ. հասավ 6-ի, իսկ շրջանառությունը՝ 2,5 մլն. ռ.։ Բանվորական մատակարարման բաժինները խոշոր դեր կատարեցին հանրապետության պետական առևտրի զարգացման ու ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ նրա տեսակարար կշռի բարձրացման գործում։

Հանրապետության ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերից, այդ թվում և ապրանքաշրջանառությունից, մասնավոր սեկտորի դուրս մղումը վերջնականապես ավարտվեց առաջին հնգամյակի վերջին։ Մասնավոր առևտրին հիմնականում փոխարինեց պետականը, որի տեսակարար կշիռը հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության մեջ 1933 թ. հասավ 33%-ի և աճի տեմպերով գերազանցեց կոոպերատիվ առևտրին։ Այսպես, եթե 1928 թ. համեմատությամբ 1932 թ. պետական առևտրի ապրանքաշրջանառությունն աճեց 9, ապա կոոպերատիվ առևտրինը՝ 5 անգամ։

1935 թ. սեպտեմբերից սպառողական կոոպերացիայի կազմակերպությունները սկսեցին գործել նաև գյուղերում, որտեղ կոլտնտեսային գյուղացիության նյութական և կուլտուրական բարեկեցության բարձրացումը նոր պահանջներ առաջադրեց նրան։ Ավելացավ կուլտուրական ապրանքների վա-

[4] «Экономический вестник Армении», 1928, № 4—5, стр. 35.
[5] «Армения в единой семье народов СССР», Ереван, 1972, стр. 193.

ճառքու 1940 թ. Հայկոոպի մանրածախ ապրանքաշրջանառությունը կազմեց 35,1 մլն. ռ., 1938 թ. 30,3 մլն. ռ. դիմաց, այսինքն՝ ավելացավ մոտ 19,1%-ով[6]։

Զուգահեռաբար աճեց նաև պետական առևտրի մանրածախ ապրանքաշրջանառությունը։ Այսպես, հանրապետության պետական առևտրի մանրածախ ապրանքաշրջանառությունը 1932 թ. 7,4 մլն. ռուբլուց 1940 թ. հասավ 67,7 մլն. ռ., այսինքն՝ աճեց մոտ 9,2 անգամ, իսկ կոոպերատիվ առևտրի ապրանքաշրջանառությունը հասավ 41,7 մլն. ռ.։

ՀՍՍՀ-ում սովետական առևտրի հետագա զարգացման համար տնտեսական նախադրյալներ հանդիսացան ժողովրդական տնտեսության վերելքը, բնակչության դրամական եկամուտների նշանակալի աճը, պետական ու կոոպերատիվ առևտրի կազմակերպական վերակառուցումը և բարելավումը, առևտրի մանրածախ ցանցի ընդլայնումն ու նրա նյութատեխնիկական հագեցվածության բարձրացումը։ 1928 թ. համեմատությամբ 1940 թ. Հայաստանի պետական ու կոոպերատիվ առևտրի մանրածախ ապրանքաշրջանառությունն ավելացավ 2,8 անգամ[7], այդ թվում քաղաքային առևտրինը՝ 2,7, գյուղականը՝ 3 անգամ։

Ապրանքաշրջանառության աճի հետ միասին ընդլայնվեց նաև սովետական առևտրի մանրածախ ցանցը։ Արդեն 1941 թ. սկզբին պետական ու կոոպերատիվ առևտրի մանրածախ ձեռնարկությունների թիվը հասավ 2710 միավորի (1072 միավոր քաղաքներում և քաղաքատիպ բնակավայրերում, 1638 միավոր գյուղական շրջաններում)։ Հասարակական սննդի ձեռնարկությունների թիվը 1928 թ. 65 միավորից 1940 թ. տարեվերջին հասավ 562-ի։

Այսպիսով, հանրապետության ապրանքաշրջանառությունը տարեցտարի ընդլայնվում էր, նպաստելով բնակչության նյութական ու կուլտուրական պահանջմունքների բավարարմանը, կենսամակարդակի բարձրացմանը։

Հայրենական պատերազմի տարիներին վերակառուցվեցին նաև երկրի ապրանքաշրջանառությունը, բնակչության մատակարարման ձևերն ու մեթոդները։ Պատերազմի սկզբնական շրջանում զգալիորեն նվազեց պետական ու կոոպերատիվ առևտրի մանրածախ ապրանքաշրջանառությունը։ Դա հետևանք էր ժողովրդական սպառման առարկաների արտադրության և ապրանքային ու շուկայական ֆոնդերի կրճատման։

Այդ ժամանակաշրջանում ավելացավ ոչ միայն բանվորական մատակարարման բաժինների քանակը, այլև նրանց տեսակարար կշիռը մանրածախ ապրանքաշրջանառության մեջ։ Եթե հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության մեջ պատերազմի սկզբին նրանց բաժինը կազմում էր 4,8%, ապա 1945 թ. այն հասավ 15,8%-ի[8]։ Հասարակական սննդի ընդլայնումը կապված էր ստրատեգիական նշանակություն ունեցող ձեռնարկություններում աշխատավայրային երկարացման, բանվոր-ծառայողների թվի մեջ կանանց տեսակարար կշռի բարձրացման և, վերջապես, սննդամթերքների ավելի արդյունավետ օգտագործման հետ։ Այս ամենը հանգեցրեց հասարակական

---

6 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960», Երևան, 1960, էջ 429։

7 «Армения в единой семье народов СССР», стр. 194.

8 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը», էջ 431։

սննդի տեսակարար կշռի բարձրացմանը հանրապետության պետական և կոոպերատիվ առևտրի մանրածախ ապրանքաշրջանառության մեջ[9]։

Պատերազմի ավարտից հետո սովետական առևտրի զարգացման համար լայն հնարավորություններ ստեղծեց ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հուժկու վերելքը։ Դա մեծապես նպաստեց մանրածախ ապրանքաշրջանառության ծավալմանը։ 1950 թ. պետական և կոոպերատիվ առևտրի մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, 1940 թ. համեմատությամբ, ավելացավ ավելի քան երկու անգամ, ըստ որում պետական առևտրի բաժինն ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում 62%-ից բարձրացավ 73%-ի, իսկ մանրածախ ցանցի ապրանքաշրջանառությունն ավելացավ ավելի քան երկու անգամ, կազմելով 216 մլն. ռ.[10]։ Միաժամանակ աճեց բնակչության մեկ շնչին ընկնող ապրանքաշրջանառության ծավալը։ Այսպես, եթե 1940 թ. բնակչության մեկ շնչի հաշվով հանրապետության ապրանքաշրջանառության ծավալը կազմում էր 82 ռ., ապա 1950 թ. այն հասավ 175 ռ.[11]։

Նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ ՀՍՍՀ պետական և կոոպերատիվ առևտրի մանրածախ ապրանքաշրջանառության զարգացումը ցույց տալու համար բերենք մի քանի օրինակներ։ 1969 թ. բոլոր ապրանքների գծով 1940 թ. մակարդակը գերազանցվեց 7,9 անգամ, այդ թվում՝ մսամթերքի և երշիկի գծով՝ 16,5, կենդանական յուղի գծով՝ 80,4, շաքարի՝ 9, բրդյա գործվածքների՝ 8,3, մետաքսյա գործվածքների՝ 11,8, տրիկոտաժի՝ 13,1, կաշվե կոշիկի գծով՝ 10,3 անգամ և այլն[12]։

Այդ ժամանակաշրջանում նշանակալի փոփոխություններ կատարվեցին նաև հանրապետության քաղաքային և գյուղական առևտրի ապրանքաշրջանառության զարգացման և դրա շնորհիվ բնակչության մեկ շնչին ընկնող ապրանքների վաճառքի բնագավառում։ Չնայած հետպատերազմյան ժամանակաշրջանում գյուղական բնակչությունն անընդհատ նվազել է, այնուամենայնիվ, նրա գնողունակությունը զգալիորեն ավելացել է։ 1940 թ. համեմատությամբ՝ քաղաքային առևտրի ապրանքաշրջանառությունը 1971 թ. ավելացել է 16,3 անգամ, իսկ գյուղականը՝ միայն 6 անգամ։ Սակայն գյուղական բնակչության մեկ շնչին ընկնող ապրանքաշրջանառությունն աճել է 5,6, իսկ քաղաքային բնակչությանը՝ 3,8 անգամ։

ՀՍՍՀ պետական և կոոպերատիվ առևտրի ապրանքաշրջանառության մեջ զգալի է հասարակական սննդի ձեռնարկությունների՝ ճաշարանների, ռեստորանների դերը։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում հասարակական սննդի ձեռնարկությունների ցանցի մեջ կառուցվածքային փոփոխություններ տեղի ունեցան՝ կապված բանվորական մատակարարման բաժինների կրճատման հետ։ Ճաշարանների ու ռեստորանների տեսակարար կշիռը 1946 թ. 56,3%-ի դիմաց 1958 թ. կազմեց 32,2%, իսկ 1970 թ.՝ 36,4%։ Առևտրի կազմակերպման ձևերի մեջ հասկանալի պատճառով ժողովրդատնտեսական խոշոր նշանակություն ու զարգացման հեռանկար ստացավ ինքնասպասարկումը։

---

9 Նույն տեղում, էջ 433։

10 «Սովետական Հայաստանը 50 տարում», Երևան, 1970, էջ 229։

11 Նույն տեղում, էջ 228, 229։

12 Նույն տեղում, էջ 236։

Քաղաքային բնակչությանը գյուղատնտեսական լրացուցիչ մթերքներ մատակարարելու գործում կարևոր ու խոշոր դեր է խաղում կոլտնտեսային առևտուրը, որը միաժամանակ ավելացնում է կոլտնտեսությունների և կոլտնտեսականների դրամական եկամուտները։ Հայաստանի մանրածախ ապրանքաշրջանառության մեջ կոլտնտեսային առևտրի տեսակարար կշիռը 1940 թ. կազմել է 12,6%։ Հայրենական պատերազմի տարիներին, ժողովրդական սպառման ապրանքների պետական ու կոոպերատիվ արտադրության կրճատման և դրա հետ կապված շուկայական ֆոնդերի նվազման հետևանքով, կոլտնտեսային առևտրի շրջանառությունն աճեց և 1945 թ. կազմեց ամբողջ ապրանքաշրջանառության 17,9 %-ը[13]։ Հետպատերազմական տարիներին գյուղատնտեսական մթերքների արտադրության աճման, ժողովրդական սպառման ապրանքների արտադրության ավելացման ու հետագա զարգացման շնորհիվ ՀՍՍՀ մանրածախ ապրանքաշրջանառության մեջ կոլտնտեսային առևտրի տեսակարար կշիռը նվազեց։

Սոցիալիստական հասարակության զարգացմամբ մանրածախ ապրանքաշրջանառության համակարգում ժողովրդական սպառման մեջ տեղի են ունենում արմատական փոփոխություններ։ Ժողովրդական սպառման ֆոնդի ընդհանուր աճի մեջ ավելանում է մսի, յուղի, իսկ ոչ-պարենային ապրանքներից՝ տրիկոտաժեղենի, կահույքի, ռադիոապրանքների և այլնի սպառումը։ Ժողովրդական սպառման կառուցվածքում համանման առաջադիմական տեղաշարժերը հանրապետության բնակչության կենսամակարդակի բարձրացման արտահայտություններից են։

Այսուհանդերձ, առանձին տարիներում պարենային և ոչ պարենային ապրանքների մանրածախ ապրանքաշրջանառության աճի տեմպերը փոխվել են անհավասարաչափ։ 1940—1961 թթ. ոչ պարենային ապրանքների մանրածախ ապրանքաշրջանառության աճի տեմպերը գերազանցում էին պարենային ապրանքների մանրածախ ապրանքաշրջանառության աճի տեմպերին, իսկ հետագա տարիներին՝ ընդհակառակը։ Եթե պարենային ապրանքների մանրածախ ապրանքաշրջանառությունը (համապատասխան տարվա գներով) 1940 թ. համեմատությամբ 1960 թ. կազմեց 443,3%, ապա ոչ-պարենային ապրանքներինը՝ 512,7%[14]։ Այդ ցուցանիշները 1960 թ. համեմատությամբ 1970 թ. համապատասխանաբար կազմեցին 249,5 և 240,8%[15]։

Դրա հետևանքով պարենային ապրանքների ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը 1940—1960 թթ. շարունակ փոքրել է (1940 թ. 54 %, իսկ 1960 թ.՝ 50,4%), իսկ 1960 թ. հետո նորից է բարձրացել և 1970 թ. կազմել 54,4%։ Դա պայմանավորված էր պարենային ապրանքների ֆոնդերի ավելացումով և, մասնավորապես, ավելի սննդարար, բայց թանկարժեք մթերքների սպառումով, անասնապահական մթերքների գների բարձրացումով, քաղաքային բնակչության թվի ավելացումով, կոլտնտեսային արտադրության զարգացումով, կոլտնտեսականների դրամական եկամուտների աճով ու սովխոզների թվի ավելացումով։ Արդյունքը եղավ այն, որ անմիջապես սպառման մթերքների ավելի մեծ մասը մտավ ապրանքային շրջանառության ոլորտ,

---

13 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը», էջ 448։

14 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 234։

15 «Армения в единой семье народов СССР», стр. 195—196.

և, բնականաբար, պարենային ապրանքների ապրանքաշրջանառության բաժինը մեծացավ։

Վերջին տասնամյակում (1960—1970 թթ.) ապրանքաշրջանառության աճին մեծապես նպաստեց հանրապետության բնակչության դրամական եկամուտների մեծացումը (2,9 անգամ), որը և բնակչությանը հնարավորություն տվեց ապրանքների գնման ծախսերը ավելացնել 2,5, այդ թվում պետական և կոոպերատիվ առևտրում՝ 2,6 անգամ։ Բնակչության դրամական եկամուտների համեմատությամբ ապրանքների գնման ծախսերի հարաբերական ցածրը աճը բացատրվում է աշխատավորության այդ տարիների խնայողությունների մոտ 7,8 անգամ ավելացումով, ինչպես նաև հանրապետությունից դրամի տարեկան դուրս բերումով[16]։

Ստորև բերված աղյուսակը վկայում է վերջին ժամանակներս բնակչության սպառման մակարդակում տեղի ունեցած զգալի տեղաշարժերի մասին։

Հիմնական սննդամթերքների սպառումը

(բնակչության յուրաքանչյուր շնչի տարեկան սպառումը կիլոգրամներով)[17]

Սննդամթերքի անվանումը	1960 թ.		1970 թ.		1970 թ. 1960 թ. համեմատությամբ (տոկոսներով)	
	ՍՍՀՄ	ՀՍՍՀ	ՍՍՀՄ	ՀՍՍՀ	ՍՍՀՄ	ՀՍՍՀ
Միս և ճարպ	40	28	48	34	120	121,4
Կաթ և կաթնամթերք (վերածված կաթի)	240	267	307	328	127,9	122,8
Ձու (հատ)	118	81	159	94	134,7	116,0
Ձուկ և ձկնեղեն	9,9	1,7	15,4	4,0	155,5	235,3
Շաքար	28,0	21,3	38,8	26,4	138,6	123,9
Բուսական յուղ	5,3	1,0	6,8	1,6	128,3	160,0
Կարտոֆիլ	113	49	130	55	90,9	112,2
Բանջարեղեն և բոստանային մթերքներ	70	65	82	101	117,1	155,3
Հացամթերքներ (հաց և մակարոնային արտադրանք վերածված այլուրի, ալյուր, ձավար)	164	185	149	154	90,9	83,2

Աղյուսակից երևում է, որ ՀՍՍՀ-ում 1970 թ. յուրաքանչյուր շնչի հաշվով 1960 թ. համեմատությամբ մսի և ճարպի սպառումն ավելացել է 6 կգ, կաթինը և կաթնամթերքներինը՝ 61 լ., ձվինը՝ 13 հատով, շաքարինը՝ 5,1, բանջարեղենինը և բանջարաբոստանային մթերքներինը՝ 36 կգ։ Աղյուսակի տվյալները նաև խոսում են այն մասին, որ ՀՍՍՀ բնակչության սպառման մակարդակը առանձին սննդամթերքների գծով առայժմ որոշ չափով ետ է մընում ՍՍՀՄ միջինից։ Այսպես, 1970 թ. Հայաստանի բնակչության յուրաքանչյուր շնչի մսի և ճարպի սպառումը ՍՍՀՄ նույն ցուցանիշի նկատմամբ կազմել է 71, ձվինը՝ 59, շաքարինը՝ 68, կարտոֆիլինը՝ 42% և այլն, իսկ կաթի և կաթնամթերքի սպառումը, ընդհակառակն, ՍՍՀՄ միջին մակարդակը գերազանցել է մոտ 7, բանջարեղենինը և բոստանային մթերքներինը՝ 23%-ով և այլն։ Հետևաբար, մեր հանրապետության բնակչության անձնական սպառման հետագա կարգավորման և պլանավորման ժամանակ անհրաժեշտ է հաշվի

[16] Նույն տեղում, էջ 192։

[17] «Народное хозяйство СССР 1922—1972», М., 1972, стр. 372, «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 220, «Армения в цифрах в 1971 г.», Ереван, 1972, стр. 148.

առնել այդ երկու պարագան։ Դա առավել ևս անհրաժեշտ է, քանի որ ներկայումս կարևորագույն նշանակություն է ձեռք բերել ժողովրդական սպառման արդյունավետ կազմակերպումը։

Ժողովրդական սպառման արդյունավետ կազմակերպման հիմնական սկզբունքներից մեկը սպառման քանակական և որակական կողմերի համատեղությունն է, քանի որ, օրինակ, սննդամթերքների սպառման քանակական փոփոխությունները լրիվ չեն արտացոլում նրա որակի փոփոխությունները։ Սննդամթերքների սպառման որակական փոփոխությունների մասին ամենից առաջ խոսում է մարդու պահանջմունքների բավարարման աստիճանը սպիտակուցներով, ճարպերով, ածխաջրատներով (այսինքն՝ հաշվի է առնվում ոչ միայն սպառվող սննդամթերքի քանակությունը, այլ նաև նրա տեսակը)։

Այսպիսով, ժողովրդական տնտեսության զարգացումը, երկրի տնտեսական պոտենցիալը հնարավոր և անհրաժեշտ են դարձնում ժողովրդական սպառման անշեղ վերելքը, նրա դիտական հիմնավորվածությունը։ Դա միաժամանակ ենթադրում է հասարակության բոլոր անդամների, յուրաքանչյուր անդամի հարաճուն նյութական և կուլտուրական պահանջմունքների բազմակողմանի բավարարում ըստ նրանց անհատական հակումների և ճաշակի։

РОСТ ТОВАРООБОРОТА И НАРОДНОЕ ПОТРЕБЛЕНИЕ В АРМ. ССР

Р. Х. ЧОБАНЯН

Резюме

При социализме в связи с тем, что существует товарное производство, обращение преимущественной части предметов потребления происходит через торговлю. Поэтому розничный товарооборот, его объем и структура в значительной степени определяют рост и структуру народного потребления и, следовательно, уровень жизни населения .

В повышении благосостояния населения нашей республики решающее значение имели вытеснение частной торговли и организация государственной и кооперативной торговли. Начиная с 1933 г. вся розничная торговля уже осуществлялась организациями социалистического сектора, в сфере товарного обращения стала господствовать советская торговля. Экономическими предпосылками этого процесса явились подъем всего народного хозяйства, развитие промышленности и сельского хозяйства, а также рост денежных доходов населения. На этой основе быстрыми темпами развивалась государственная и кооперативная торговля, которая все больше обеспечивала возрастающие потребности населения в продуктах питания, промышленных товарах и товарах культурно-бытового назначения.

За последнее время произошли значительные изменения в структуре товарооборота, характеризующие непрерывный процесс роста народного благосостояния: повысилась доля продажи непродовольственных товаров в общем объеме товарооборота, в составе продовольственных товаров возрос удельный вес наиболее ценных в питательном отношении продуктов.